# Միքայել Նալբանդյան

## Մամիկոնյան Մեծ Վահանի պատասխանը

Հիմի Է՞լ խոսենք, եղբարք, հիմի՞ էլ,
Երբ ընտանեկան երկպառակությամբ
Ուրիշ բան չունինք, բայց իրար դավել,
Եվ սարսափելի ազգուրացությամբ
Մեր նախնյաց ուխտը ոտքով կոխել ենք .
Հիմի Է՞լ խոսենք:

Հիմի Է՞լ խոսենք, երբ քաջն Վարդան,
Վաթսուն հազարից, հազարով մնաց,
Մինչ մնացել էր պարսից լոկ մատյան
Գունդը՝ մեր վաթսուն հազարի դիմաց,
Երբ մեր վատությամբ՝ ո՞ղջ կորուսել ենք .
Հիմի Է՞լ խոսենք:

Հիմի Է՞լ խոսենք, երբ օտարից շատ
Մենք ենք մեր ազգի արյունը խմում .
Մոխրատնով լցինք Դվին, Արտաշատ,
Ծխի մեջ կորավ խաչն եկեղեցուն,
Երբ այս ամենը մենք կատարել ենք .
Հիմի Է՞լ խոսենք:

Հիմի Է՞լ խոսենք, երբ հրապարակում
Պարսիկը առակ արել է հային .

«Եթե ասորու նման աշխարհում
Չկա մի վատ ազգ, բայց, քան ասորին,
Է՛լ վատ է հայը», մենք այս տանո՛ւմ ենք .
Հիմի է՞լ խոսենք:

Հիմի է՞լ խոսենք, երբ իշխանություն
Ծախում է անարգ հացկատակներին,
Մինչ ստրուկ մարդիկ նստան մեր գլխին
Եվ մեզ կարծում են հող իրենց ոտքի,
Ու մենք մեզ կոխող ո՛տքը լիզում ենք .
Հիմի է՞լ խոսենք:

Հիմի է՞լ խոսենք, երբ Լուսավորչի
Բնիկ ժառանգի թևերը կտրած,
Անարգ պարսիկը՝ այս ու այն թեմի՝
Կարգում է տեսուչ ըստ յուր չար մտաց
Եվ մենք դեռ «կեցցե՛ արին» գոռում ենք:
Հիմի է՞լ խոսենք:

Հիմի է՞լ խոսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունում ենք մենք այդ չքերին:
Որ դրան շուն են, և մեզ տեսնելիս՝
Շուտ դիմակները դնում երեսին,
Այդպիսիներին դարձյալ պատվում ենք .
Հիմի է՞լ խոսենք:

Էլ մեր երեսին մնա՞ց մի կաթիլ
Ամոթի սուրբ ջուր, որ բերան բանանք:
Ո՛չ, թե չենք ուզում հողից հող կորչիլ,
Թշնամու արյունով մեր թրին ջուր տանք:
Ազգ, եկեղեցի փրկենք ազատենք,
Ապա թե խոսենք: